

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԻ ՊԱՐՁ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ
ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Ս. Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

Հին հայերենը իր բնույթով հնդեվրոպական լեզու է. բայց նրա զրավոր ամենահին հուշարձանների տվյալները ցույց են տալիս, որ նա զարգացման երկար շրջան է անցել և դրի առնվելու ժամանակ, մեր թվարկություն չորս-հարյուր զարի վերջերին, ձեռք էր բերել այնպիսի հատկանիշներ, որոնք, ինչպես ճիշտ կերպով նկատել է Ա. Մեյեն, խորապես տարբերել էին նրա հնչյունական և ձևաբանական համակարգը հնդեվրոպականից: Այդ տարբերությունները, որոնք նշված են շատ աստիճանաբար կողմից, դրսևորվել են բազմազան ձևերով. նոր հնչյունների առաջացմամբ, հնդեվրոպական մի շարք հնչյունների և երկրորդայինների որակի փոփոխմամբ, հոլովման և խոնարհման համակարգի, շարահյուսության ու բառապաշարի մեջ առաջացած տեղաշարժերով և այլն: Սակայն այդ բոլորով հանդերձ հայերենը իր հիմնական արտահայտություններով՝ քերականությամբ ու բառապաշարի բնորոշ հատկանիշներով մնացել է հնդեվրոպական տիպի լեզու: Հատկապես հայերենի բալը իր զարգացման ընթացքում նոր կերպարանափոխությունների է ենթարկվել, բայց պահպանել է հնդեվրոպական դիմալին վերջավորությունները, թեև փոփոխված վիճակով, և մի շարք ժամանակների հին առանձնահատկությունները, որոնք ողիզ գծով նրան կապում են հնդեվրոպական վաղընջական լեզուների հետ:

Հին հայերենում բալի ժամանակները կազմվում են երկու՝ ներկայի և անցյալի, հիմնականում միևնույն արմատի հիմքերից. սակայն պահպանված են նաև տարբեր արմատներից ձևավորված հիմքեր, որոնք հայերենի բալերը սերտորեն կապում են հնդեվրոպական հիմք լեզվի հետ:

Հայերենի ներկայի հիմքը ունի չորս լծորդներ՝ ե, ի, ա, ու, և միայն մի բալ ու (գու), որոնք իրենց իմաստով և ձևավորմամբ հատուկ են միայն հայերենին:

Ն խոնարհման պարզ բալերի գերակշռող մեծամասնությունը ներդրածական սեռի է, ունի աորիստի ցույական հիմք և կազմվել է հայերենի զարգացման ավելի ուշ շրջանի օրինաչափություններով:

Ի խոնարհիչով պարզ բալերը, չնչին բացառությամբ, չեղոք կամ կրավորական սեռի են և բացի նախիմ բալից, ունեն աորիստի ցույական հիմք, ածանցավոր բալերը ավելի հին կազմություն ունեն, նրանց մի մասը իր համապատասխանությունները ունի հնդեվրոպական լեզուներում, բայց այսուհետև նկատվում են հայերենի զարգացման ընթացքում կատարված փոփոխու-

թյունները: Ի խոնարհման ածանցավոր բայերի գերակշռող մեծամասնությունը անցյալի հիմքում հանդես է գալիս արմատական ձևով:

Ա խոնարհիչ ունեցող բայերի մեծամասնությունը նույնպես իր քերականական իմաստով չեզոք սեռի է: Այդ բայերի ա լծորդը, որը չեզոք իմաստ արտահայտող ածանց է հնդեվրոպական մի շարք լեզուներում, հին հայերենում պահպանել էր իր սկզբնական հատկանիշները: Ա խոնարհման բայերը լինում են պարզ և ածանցավոր, որոնց մեծամասնությունը խոնարհվում է հայերենի օրինաչափություններով և ունի սովորական աորիստ:

Այս խոնարհիչով կազմված բայերը մեծ մասամբ ունեն իրենց համապատասխանությունները հնդեվրոպական լեզուներում, ինչպես՝ լատ. uoluo «ճոճում եմ», գոթ. walaian «գլորել», հայերեն՝ գլխում և այլն: Այս խոնարհման բայերի անցյալի հիմքը, աննշան բացասություններով, նախնական է, ասինքն՝ ոչ ցոյական, մի հանգամանք, որն ընդգծում է այդ լծորդության և հնդեվրոպական բայերի առնչակցությունները:

Ներկայի հիմքը կարող է լինել պարզ և ածանցավոր: Բայածանցները հայերենում լինում են չեզոք կամ կրավորական իմաստ արտահայտող, պատճառական կերպի բայեր կազմող և գլխավորապես ներգործական սեռի բայերին ավելացվող և ընդհանուր կիրառություն ունեցող ածանցներ: Այդ բայածանցները կարող են լինել պարզ կամ բաղադրյալ, ինչպես՝ չ, և, և նչ (ն-չ) ուցալն (ոչ-ց-ան) և այլն:

Ա խոնարհման բայերը ստանում են ալն (ն) ածանցը, եթե նկատի չունենանք աղաչել և ամաչել¹ բայերը, որոնք ունեն աչ (չ) ածանցը, որը ձուլվել է բառին և կորցրել իր սկզբնական իմաստը: Ի խոնարհման բայերն ունենում են ալն (ն), նչ, չ: Ա խոնարհման բայերը և, ելն, ալն, ու խոնարհման բայերը՝ և ածանցները: Հին հայերենում ածանցավոր մի շարք բայեր ունեն նաև իրենց պարզ ձևերը, ինչպես՝ անիծանել-անիծել, սուղանել, սուղել, զատանել-զատել, բաղձանալ-բաղձալ, խրոխտանալ, խրոխտալ, տենչանալ-տենչալ և այլն, որոնք ցույց են տալիս, որ այդ ածանցների զգալի մասը կորցնում էր իր քերականական իմաստը և աստիճանաբար ձուլվում էր բառին կամ գործածությունից դուրս էր ընկնում:

Հայերենի հիշյալ բայածանցներից ամենատարածվածն է և ածանցը, որը ծագումնաբանորեն կապվում է հնդեվրոպական — ne/o ածանցի հետ, և իր ավելի ամբողջական ձևով և իմաստով պահպանված է նաև սլավոնական և գերմանական լեզուներում: Այսպես օրինակ՝ հայերեն դլնել բայի սահմանական ներկան կազմվում է դի հիմքից (աորիստից), և ածանցից և բայաղեմքի վերջավորությունից. հին սլավ. стану կազմված է ста հիմքից, н ածանցից և բայաղեմքի վերջավորությունից, գոթ. fraihna «հարցնում եմ», հուն. πυνω «խմում եմ» բայերն ունեն ne ածանցը և այլն:

Պատճառական կերպի բայեր կազմող գ ածանցը, որը Մեյլեն կապում է հնդեվրոպական sko,e ածանցի հետ, գրվելով չեզոք սեռի բայերի վրա, նրանց տալիս է ներգործականի, իսկ ներգործականներին՝ պատճառականի իմաստ:

Հայերենում և խոնարհման կրավորական և չեզոք սեռի բայերի ներկայի հիմքը ունենում է ի հնչյունը, նա ծագում է հնդեվրոպական *-ye/o-, *l- (-l-)

¹ Հմմտ. Мейе, Введение в сравнительное изуч. индоевропейских языков, 1938, էջ 226:

ածանցից, որը պահպանված է հնդեվրոպական մի շարք լեզուներում. բալթիկ և սլավոնական լեզուներում վիճակ ցույց տվող աթեմատիկ շատ բաղբիռի ներկան կազմվում է ի հնչյունով. օրինակ՝ լիտ. *min-i*, հին սլավ. *мѣн-и-тъ* «մատածում է»։ Հայերենում ի խոնարհման բաղբիռի անցյալի հիմքում ալզ ածանցը չի պահպանվել. նա փոխարինվել է *a* ածանցով։

Հայերենի անցյալ կատարյալի հիմքը լինում է պարզ և բաղադրյալ։ Պարզ հիմք ունեն *և* և ի խոնարհման ածանցավոր բաղբիռը, ու խոնարհման բաղբիռի մեծ մասը, իսկ բաղադրյալ ցոյական հիմքը՝ *և*, ի խոնարհման պարզ և *ա* խոնարհման համարյա բոլոր բաղբիռը։ Այս ընդհանուր օրինաչափությունները, ոտկալն, հաճախ խախտվում է։ Այսպես օրինակ՝ թեև ու խոնարհման բաղբիռի մեծ մասը ունի աորիստի պարզ հիմք, բայց կան մի շարք բաղբիռ, որոնք ունեն ցոյական հիմք, ինչպես իսկուժ-խցի, յեկուժ-յեգալ և այլն։

Հայերենի զարգացումը ընթացել է բաղբիռի ցոյական հիմքի տարածման ուղիով. այդ պատճառով էլ զրաբարում գեական ցոյական հիմք չունեցող բաղբիռի գերակշռող մեծամասնությունը հետագայում դառնում է ցոյական։ Հայերենի ցոյական հիմքը, ինչպես նշել են հայերենի ուսումնասիրություններում զրադված բոլոր լեզվաբանները, ավելի ուշ շրջանի երևույթ է և ձևավորվել է հայերենի զարգացման օրինաչափություններով։ Այդ հարցում թեև բոլոր լեզվաբանները միևնույն տեսակետն ունեն, բայց *q* ածանցի առաջացման մասին տարբեր կարծիքներ են արտահայտել։ Լեզվաբաններից ոմանք կարծել են, որ հայերենի անցյալի *q*-ն կապվում է հնդեվրոպական օժանդակ **es* բաղբի հետ, ոմանք կարծել են, որ նա առաջացել է *sk* ածանցից, իսկ Ա. Թոմսոնը ենթադրել է, թե *q* ածանցը առաջացել է հայերենի ալն սոսկ ածանցավոր բաղբից, որոնք ունեցել են *q* արմատական հնչյունը։ Նրա այդ ենթադրությունները բաճալ բալը ունեցել է բացնալ, թանալը՝ բացնալ, ընթեռնուլը՝ ընթեռնուլ, իմանալը՝ իմացնուլ ձևը, որոնց *q*-ն ներկայի հիմքում հետագայում է ընկել, բայց պահպանվել է անցյալի հիմքում և այդ բոլորի անալոգիայով տարածվել է ու ստեղծվել հայերենի ցոյական հիմքը¹։ Թոմսոնի այդ կարծիքը ուշագրավ է ամենից առաջ նրանով, որ նա այդ ածանցի առաջացումը բացատրում է միայն հայերենի իրողություններով, ապա նշում է անալոգիայով հայերենի ձևերի առաջացման ընդհանուր տեսչենցը, որը կարելի է դիտել հայերենի զարգացման բոլոր շրջաններում։ Թոմսոնի այդ տեսակետը, չնայած իր օրիգինալությանը, չընդունվեց լեզվաբանների կողմից։ Տարածված է Մեյլի կարծիքը, ըստ որի հայերենի աորիստի *q* ածանցը առաջացել է հնդեվրոպական **sko/je* ածանցից, որը հնդեվրոպական լեզուներում կազմում է մի շարք բաղբիռի ներկալի հիմքը։

Այսպիսով, հայերենի բաղբիռները թեև իրենց կազմության որոշ արտահայտություններով կապվում են հնդեվրոպական բաղբիռների հետ, բայց հիմնականում ձևավորվել են նրա զարգացման ընթացքում, նրա առաջընթացի ներքին օրինաչափություններով։ Հնդեվրոպական *ա*, *ե*, *ի*, *ո*, ու բաղբիռները հայերենում հանդես են գալիս իբրև ներկալի հիմքի ձայնավորներ և կանոնավորապես պահպանվում են այդ հիմքից կազմված ժամանակներում։ Անցյալ կատարյալի հիմքում չեն պահպանվում այդ ձայնավորները։

¹ Հմտ. А. Томсон, Историческая грамматика совр. армянского языка гор. Тифлиса, 1890, էջ 239-245։

Այդ ձևափոխումների հետևանքով հայերենի բոլոր բայերը ներկայի հիմքում ունեն իրենց հիմքի ձայնավորները:

Հնգվորոպական բայերի խոնարհումը իրականացվել է երեք միջոցներով՝ վերջավորություններով, ձայնավորների հերթագայություններով և երաժշտական շեշտով: Հայերենի բայը պահպանել է խոնարհման միայն առաջին միջոցը, այսինքն՝ հայերենում բայերի խոնարհումը կատարվում է դեմքերի վերջավորություններով, որոնք տարբեր գրոհորումներ ունեն տարբեր ժամանակներում: Հնգվորոպական բայական վերջավորություններով որոշվում էին բայի ներդոծական և չեղոք սևտերը, գեմքերը, թվերը և այլն: Հայերենում բայի վերջավորություններով որոշվում են գեմքերը և որոշ գեպքերում նաև ժամանակները: Հայերենը զանազանում է երկու թիվ՝ եզակի և հոգնակի, այդ պատճառով էլ երկակի թվի կառուցման արտահայտելու համար որևէ ցուցանիշ չի պահպանել: Նա չի պահպանել նաև հնգվորոպական բայի սկզբնալին և երկրորդալին տիպի վերջավորությունների տարառահայտները: Բայը գրարարում, չնչին բացառություններով, թեմատիկ էր. ներկայի հիմքից կազմված բոլոր ժամանակներն ունեին իրենց խոնարհիչները, որոնք հանդես էին գալիս իրեն հիմքի ձայնավորներ և որոշում էին խոնարհման կարգերը:

Հայերենի բայի ներկայի և անցյալի հիմքերից կազմված ժամանակներն ունեին տարբեր վերջավորություններ, որոնք հիմնականում բնագծանուր էին տարբեր խոնարհման ենթարկվող բայերի համար, եթե նրանք ունեին բայական միևնույն սևտը: Հայերենի տնորոշ գերբայը, ի տարբերություն հնգվորոպական բայի անորոշ ձևից, ուներ միայն մի՝ Վ վերջավորությունը: Այդ գերբայից կազմվում էր ապառնի գերբայը, իսկ ենթակայական և անցյալ գերբայներն ունեին հատուկ վերջավորություններ, ենթակայական գերբայի առջև և ինչ վերջավորությունները կազմված են ա, ւ և ղ, չ տարբերից, որոնցից ա և ւ հնչյունները կապվում են հնգվորոպական a և t ածանցների, իսկ ղ-ն և չ-ն՝ լ (lo) և k ածանցների հետ: Անցյալ գերբայի -եալ վերջավորությունը նույնպես կազմված է երեք՝ ե, ա, լ տարբերից, և տարբեր կապվում է հնգվորոպական աորիտի is վերջավորության հետ, որը վկայված է մի շարք լեզուներում, ինչպես՝ սանսկ, a bhar-is-am «ես բերի», լատ. eg-is-ti «գալ քեցիր», eg-is-tis «գալ քեցիր»: Հայերենի ա հնչյունը կապվում է a ածանցի հետ, որը որոշ լեզուներում հանդես է գալիս իրեն աորիտի կամ անորոշ գերբայի հիմքի հնչյուն, ինչպես՝ սլավ. пѣсати (pik-ā հիմքից) «գրել», լատ. paro (parare) «պատրաստում եմ» և այլն: Անցյալ գերբայի Վ վերջավորությունը կապվում է հնգվորոպական -lo ածանցի հետ, որը նույնպես որոշ լեզուներում կազմում է անցյալ ժամանակը: Հայերենի -եալ վերջավորություն մեջ ե-ն առաջացել է is-ից, երբ զուգակցվել են is և a ածանցները և ընկել է s հնչյունը: Այդ եա բաղադրյալ ածանցը մեր կարծիքով հանդես է գալիս նաև անցյալ կատարյալի ցուական հիմքում՝ գ-ից առաջ (գր-եա-ց):

Գրարարի խոնարհման համակարգը որևէ բացառություն չի հանդուրժում, չի առկա բայ, որը խոնարհման բնագծանուր կանոնից շեղվի: Այդ ավելի պարզ կերպով ժամանակների կազմության օրինաչափությունները գիտելիս:

Ն Ե Ր Կ Ա

Հին հայերենի ներկան կազմվում է հիմքից, խոնարհիչից և բայական վերջավորություններից: Ներկայի եզակի առաջին գեմքը բոլոր խոնարհումների հա-

մար ունի մ, երկրորդը՝ ա, երրորդը՝ յ, իսկ հոգնակին՝ մք, յք և ն վերջավորությունները. օրինակ՝ գրեմ, գրես, գրե (գրե-լ), գրեմք, գրեյք, գրեն, աղամ, աղաւ, աղայ, աղամս, աղայք, աղան, խօսիմ, խօսիս, խօսի, խօսիմք, խօսիք, խօսիմ, խօսիս, խօսու, խօսուք, խօսուն, գոմ, գոս, գոյ, գոմք, գոյք, գոն: Հոգնակի երրորդ գեմքի ն-ն երկու ֆունկցիա է կատարում. նա հանդես է գալիս և՛ իրրե հոգնակի վերջավորություն, և՛ իրրե հոգնակի երրորդ գեմքի ցուցիչ, որովհետև եզակի երրորդ գեմքի բայական յ վերջավորությունը չի պահպանվել: Հոգնակի երկրորդ գեմքի բայական վերջավորությունը նույնպես չի պահպանված լրիվ ձևով. հոգնակի երկրորդ գեմքի յ-ն թեև ոմանք կապում են հնդեվրոպական համապատասխան գեմքի tna հոգնակի մասնիկի հետ, բայց հայերենում նա հոգնակի վերջավորություն իմաստ չունի և հանդես է գալիս իրրե գիմային վերջավորություն:

Հայերենի ներկայի գիմային վերջավորությունները կապվում են հնդեվրոպական բայի ներգործակերպ խոնարհման ներկայի սկզբնային վերջավորությունների հետ: Հնդեվրոպական բայը ներգործական սեռի ակնմատիկ ձևերի մեջ ներկայի եզակի առաջին գեմքում ունեցել է *-mi վերջավորություն. ինչպես սանսկ, as-mi «եմ», հուն. εἰμι, խեթերեն es-mi, հին սլավ. ec.-mъ, հայերեն եմ (հավանաբար առաջացած es-mi ձևից): Բայական այդ վերջավորությունը կազմվում է հնդեվրոպական մի շարք լեզուների ներկայի առաջին գեմքը. Օրինակ՝ հուն. δίδωμι «տալիս եմ», οἰκονομῶ «գործարում եմ», սանսկ. bha-raimi «երում եմ, տանում եմ», հայերեն՝ տամ և այլն: Հայերենում հիշյալ վերջավորության յ-ն ընկել է, նախ այն պատճառով, որ շեշտը եղել է նախավերջին վանկի վրա. ապա նրանով, որ հայերենում բայական վերջավորությունները կամ օժանդակ բայը, կրե հանդես են գալիս իրրե բայի բաղադրիչ, կրեք չեն շեշտվում: Դրանից բացի, հայերենի բայը ստացել է հատուկ թեմա, որն իր հերթին սպասարկել է բայական վերջավորության վերջին ձայնավորի անկմանը, ինչպես առաջին, նույնպես և երկրորդ և երրորդ գեմքերում:

Հնդեվրոպական բայի ներկայի եզակի երկրորդ գեմքն ունեցել է *-si վերջավորությունը, որը համարյա թե նույնությունը պահպանված է հնդեվրոպական մի շարք լեզուներում, ինչպես՝ սանսկ. e-si «գնում եմ», խեթերեն kuesi «սիրում եմ» և այլն: Հայերենում այդ վերջավորությունը դարձել է ա, ինչպես՝ ես (es-si ձևից), գրես, կարդաս և այլն: Այդպիսի ձև է ստացել այդ վերջավորությունը նաև լատիներենում՝ legis «հավաքում եմ», ռուսերենում՝ читаешь < si և այլն:

Երրորդ գեմքը ունեցել է *ti վերջավորությունը, որը վկայված է հնդեվրոպական շատ լեզուներում, ինչպես՝ սանսկ. as-ti «կա, է», հին ռուս. es-тъ «կա», գոթերեն es-t, լատ. es-t, հուն. es-ti և այլն: Հայերենի ներկայի եզակի թվի երրորդ գեմքում նա վերածվել է յ հնչյունի, որը լրիվ ձևով արտահայտված է միայն ա և ո խոնարհման բայերում (կարդամ, կարդաս, կարդայ), իսկ ե, ու, ի խոնարհման բայերի երրորդ գեմքում, նա ձուլվել է խոնարհիչին և տվել ե, ու, ի: Հնչյունը, ինչպես գիտենք, կազմված է ե և յ հնչյուններից, իրրե բայական վերջավորությունն այստեղ առկա է յ, իսկ ե-ն խոնարհիչ է: Նույնը կարելի է ասել ու-ի մասին, որտեղ ո-ն խոնարհիչն է, իսկ ո-ն բայական վերջավորությունը՝ հնչյունափոխված յ: Հայերենում ի հնչյունը յ-ի ձայնավոր տարբերակն է և այդ պատճառով էլ կրեք ի-ից հե-

տո յ չի կարող գրվել. ի խոնարհման բայերի մեջ երրորդ դեմքի ի-ն հանդես է գալիս և՛ իրրե խոնարհիչ, և՛ իրրե բայական վերջավորություն՝ յ:

Հայերենում իրրե ընդհանուր կանոն ձայնավորների մեջ գտնված հընդ-կվրոպական ի-ն վերածվել է յ-ի, օրինակ՝ pater (հայր), mater (մայր) և շատ այլ բառերի մեջ ի-ն դարձել է յ՝ հայերենի զարգացման շատ վաղ շրջանում: Այդ օրինաչափությունը գործել է նաև բայական վերջավորությունների ձևավորման ժամանակ: Այդ հանգամանքը նկատի ունենալով կարող ենք ասել, որ հայերենի ներկայի երրորդ դեմքը մի ժամանակ ունեցել է ati, eti, oti, iti վերջավորությունները, որոնք հայերենի հնչյունափոխության օրենքներով նախ դարձել են՝ ալի, ելի, ոլի, իլի, ապա՝ վերածվել ալ, ել, ոլ, իլ հնչակումպլեքսների, որոնցից ել, ոլ, իլ ձուլվել և տվել են ե, ու, ի հնչյունները, որոնք գրաբարում գեոևս պահպանած են եղել իրենց սկզբնական արտասանության հետքերը:

Հնդկավրոպական շատ լեզուներում, որոնց թվում նաև հայերենում, ներկա ժամանակի հոգնակին կաղմվում է ասորերի ձևերով: Այսպես՝ հնդկավրոպական բայի երրորդ դեմքի հոգնակի վերջավորությունը եղել է enti, onti, ինչպես՝ սանսկ. s-ant-i «են», իսթ.՝ kuanzi «խիում են», լատ. s-unt «են», հին ռուս.՝ сѣтъ, գոթ.՝ s-ind և այլն: Հայերենը պահել է այդ վերջավորության և տարրը: Հայերենի ներկայի առաջին և երկրորդ դեմքերի հոգնակին կաղմվում է ք ածանցով, որն անմիջականորեն չի կաղմվում հնդկավրոպական բայի ներկայի հոգնակի այդ դեմքերի վերջավորությունների հետ: Հնդկավրոպական մի շարք լեզուներում հոգնակի առաջին դեմքը ունի masi վերջավորությունը, ինչպես՝ սանսկ. mah, վեդ. mā. հունարեն μᾶ, μέν, սլավոնական լեզուները мо, ме, мы վերջավորությունները և այլն: Երկրորդ դեմքը մի շարք լեզուներում ունի tha, լատիններենում՝ tis, իսթերենում՝ teni և այլն: Ենթադրվում է, որ ti-s վերջավորության հետքերը պահպանված են նաև հայերենում: Սակայն այդ ենթադրությունն ապացուցելու համար շոշափելի փաստեր չի կարելի նշել, մանավանդ, եթե նկատի ունենանք երկրորդ դեմքի ք վերջավորությունը, որը հայերենի օրինաչափությունների համաձայն գրվում է եզակի համապատասխան դեմքի վրա: Պետք է ենթադրել, որ հայերեն ք ածանցը հնդկավրոպական ծագում ունի, բայց տեղական լեզուների ազդեցության տակ ձևափոխվել ու հեռացել է իր սկզբնական ձևից: Իսկ ինչ վերաբերում է երկրորդ դեմքի յ վերջավորությանը, որը միշտ հանդես է գալիս ք-ի հետ (աղամք, աղայք, աղան), պետք է ասել, որ նա հայերենում հոգնակի իմաստ չունի, թեև ծագումնաբանորեն այն կարելի է կապել հնդկավրոպական tha, te հոգնակի վերջավորության հետ: Հայերենում այդ մասնիկը ունի դիմային վերջավորության իմաստ. հավանաբար նա առաջացել է հայերենի զարգացման ուշ շրջանում, բայցի հոգնակի ք վերջավորության առկայության ժամանակ և այդ պատճառով էլ չի պահպանել հոգնակի իմաստը:

Հայերենի ներկայի դիմավոր ձևերի առաջացման մասին արտահայտվել են նաև այլ կարծիքներ: Ակադեմիկոս Մառը և նրա աշակերտները կարծում էին, թե հայերենի խոնարհումը իրականացվել է խոնարհվող բային համապատասխան օժանդակ բայերի ամբողջական ձևերի կցումով. նրանց կարծի-

¹ Տե՛ս Մ և յ և, նշվ. աշխ., էջ 243:

քով ներկայի գրեմ, գրես, գրե, բայածևերի եմ, ես, ե վերջավորությունները առաջացել են եմ օժանդակ բայի գիմալին ձևերի կցումով գր հիմքին: Եմ օժանդակ բայի ե գրեմ բայի գիմալին վերջավորությունների նմանությունը, ինչպես, չի կարող հիմք առել ընդունելու այդ տեսակետը, որովհետև ինչպես եմ օժանդակ բայի, նույնպես ե գրեմ բայածևի մեջ մ գիմալին վերջավորություն է ե կրկու դեպքումն էլ բայերի ներկան կազմվում է միևնույն կզանակով: Եմ օժանդակ բայի արմատը, ինչպես հայտնի է, կղել է *es, իսկ մ-ն առաջացել է -mi ձևից, ուրևն հայերենի օժանդակ բայի սկզբնական ձևը պետք է լիներ *es-mi, *es-si, es-ti, ե ոչ եմ, ես, ե: Պատահական նմանությունները առիթ են տվել Մատին և նրա հետևորդներին համեմատելու պատմականորեն միանգամայն տարբեր ժամանակներում առաջացած երևույթները միմյանց հետ, և լեզվական փաստերի պատմականությունը նկատի չունենալու պատճառով, ընկնելու սխալների մեջ:

Հայերենի ներկա ժամանակի կզակի երկրորդ գիմքի ա (ես, գրես) մասնիկի մասին հնդեվրոպական լեզվաբանության ներկայացուցիչներն էլ տարբեր կարծիքներ են հայտնել. նրանց մեջ ամենաուշագրավը, մեր կարծիքով, Ս. Թոմսոնի ենթադրությունն է. նա կարծում է, թե այդ ա-ն առաջացել է օժանդակ բայի երկրորդ գիմքի ա-ի անալոգիայով: Այս տեսակետի օրգինալությունը ամենից առաջ այն է, որ Թոմսոնը հայերենի բայական բոլոր ձևերի առաջացումը անմիջապես չի բխեցնում հնդեվրոպական ձևից և տեսնում է նրանց ինքնուրույն դարգացման ուղիները:

Ա. Ն. Յ. Յ. Ա. Լ. Ա. Ն. Կ. Ա. Տ. Ա. Բ.

Հայերենում անցյալ անկատարը իր կազմությամբ տարբերվում է հընդ-եվրոպական կենդանի շատ լեզուների անցյալ անկատարից:

Անկատարի կազմության մասին կղել են տարբեր տեսակետներ, որոնցից ամենահավանականը բազմափաստակ հայագետ Հ. Աճառյանինն է¹: Հայերենի անկատարի վերջավորությունները կազմված են մի քանի տարրերից՝ գիմքի վերջավորություններից, խոնարհիչից և յ հնչյունից: Այդ բոլոր բաղադրիչները, թեև նկատվել են շատ լեզվաբանների կողմից, բայց համոզիչ փաստերով չեն մեկնարանվել: Պրոֆ. Հ. Աճառյանը առաջին անգամ փորձեց պատմա-համեմատական մեթոդով մոտենալ նրանց պարզարանմանը և հասավ որոշակի նվաճումների: Երա ուսումնասիրությամբ պարզվեց, որ հայերենի անցյալ անկատարի վերջավորության այդ երեք տարրերից յուրաքանչյուրը ունի իր քերականական իմաստը և առաջացել է հայերենի զարգացման բնթագրամ՝ հնդեվրոպական բայի համապատասխան վերջավորությունների և ածանցների հիման վրա:

Հայերենի բայերի մեջ այդ երեք տարրերը իրենց առավել կատարյալ տեսքով երևում են ա և և խոնարհման բայերում. այսպես՝ աղալ բայը անցյալ անկատարում ունի հետևյալ կերպարանքը. աղ-ա-լ-ի, աղ-ա-լ-ի-ր, աղ-ա-լ-աք, աղ-ա-լ-իք, աղ-ա-լ-ին: Այստեղ պարզ երևում է, որ բա-

¹ Տե՛ս նրա հոդվածը՝ «Имперфект в древнеармянском и некоторых индоевропейских языках», տպված Институт языкознания, доклады и сообщения, IV, 1952, էջ 85-90:

որ արմատին՝ աղ-ին ավելանում է նախ ներկայի թեման՝ ա հնչյունը, ապա՝ յ-ն, որը անցյալի իմաստ է արտահայտում և համապատասխան գեմքերի վերջավորությունները՝ ի, իր, ք, աք, իք, ին։ Մյուս խոնարհումները նույնպես կազմվում են այդ տարրերից, բայց ենթարկված հայերենի հնչյունափոխության օրենքներին և զգալի չափով ձևափոխված. օրինակ՝ և և ու խոնարհման բայերում յ ածանցը չի երևում, եթե նկատի չունենանք ու խոնարհման բայերի եզակի երրորդ դեմքը։ Այդ ածանցը միացել է նախորդ խոնարհիչի հետ և կազմել՝ և խոնարհման մեջ և (և-չ), իսկ ու խոնարհման մեջ՝ ու (ու-չ), որը երևում է իր ավելի կատարյալ ձևով եզակի երրորդ դեմքում (թողոյր)*։

Հայերենի անցյալ կատարյալի յ ածանցը առաջացել է -լ- հնչյունից, որը հնդեվրոպական կենդանի մի շարք լեզուներում. ինչպես՝ գերմաներենում, անգլերենում, պարսկերենում և այլն, կազմում է անցյալ անկատարը (ich libte, I loved, xordam, xordi և այլն)։ Հայերենի անցյալ անկատարի այդ յ ածանցը ցույց է տալիս, որ հնդեվրոպական հիմք լեզվում, բացի մի շարք այլ ածանցներից, եղել է նաև լ ածանցը, որով կազմվել է անցյալը։ Այդ ածանցը պահպանվել է հնդեվրոպական կենդանի շատ լեզուներում տարբեր իմաստներով. հին պարսկերենում այդ ածանցով կազմվել է անցյալ գերրայը, նոր պարսկերենում գրանով կազմվում է անցյալ ժամանակը. օրինակ՝ raf-tam «զնացի», rafti «զնացիր», raft «զնաց», raftim, raftid, raftand «զնացինք, զնացիք, զնացին»։ Այդ ածանցն ունի իր մի այլ՝ to տարբերակը, որը հնդեվրոպական որոշ լեզուներում կազմում է ածական անուններ. ինչպես՝ գերմ. gru-to «խաված», լատ. barba-tus, հին. սլ. brada-tū, ռուս.՝ бородачъ «մորուքավոր» և այլն։ Այդ բոլորից հետևում է, որ պրոֆ. Ն. Աճառյանի կարծիքը հայերենի անցյալ անկատարի կազմության մասին մինչև այժմ եղած տեսակետներից ամենահավանականն է։

Հայերենի անցյալ անկատարի և կատարյալի գեմքերի վերջավորությունները, ինչպես տեսանք, հիմնականում համընկնում են. նման երևույթ նկատելի է նաև հնդեվրոպական այլ լեզուներում, այսպես օրինակ՝ որոշ լեզուներում բայերի անցյալի առաջին գեմքի վերջավորությունը -ai է, որը հնչյունափոխվելով տալիս է յ. լատիներենը պահպանել է նման վերջավորություն օրինակներ, ինչպես՝ tatud-i «խոսեցի», հունարենում նույնպես պահպանված է այդ վերջավորությունը, սակայն բարդված այլ մասնիկների հետ. ինչպես՝ Τέλει-ναι — «զնում եմ» (ինձ համար), Ξέρω-ναι — «տարվում եմ» և այլն։ Հունարեն — ναι վերջավորության մեջ ν ներդրածական սեռի բայերի առաջին գեմքի անալոգիայով առաջացած նորակազմություն է, որը չեղոք սեռի բայերի մեջ հանդես է գալիս իբրև առաջին գեմքի վերջավորության անբաժանելի մասը։ Հնդեվրոպական լեզուներում առաջին գեմքի համար կա երկրորդական -i- վերջավորություններ, ինչպես՝ սանսկ. ākṛi «կատարեցի» և

* Իր վերոհիշյալ հոդվածի մեջ պրոֆ. Ն. Աճառյանը կարծում է, որ ու խոնարհման բայերի երրորդ գեմքի -ոյլ վերջավորությունը առաջացել է -ույր ձևից. պետք է բողոքել բայը լինել բողոյլը, ասում է նա, բայց երրորդ գեմքում չի ընկնում յ-ն, որի ազդեցությամբ ու-ն վերածվում է ո-ի։ Մենք կարծում ենք, որ սկզբնապես եղել է ո խոնարհում հայերենում և հետագայում միայն ստեղծվել է ու խոնարհում. հետևաբար բողոյլ ձևը ավելի հին է, քան բողոյլը։

ալլն: Հայերենը, ինչպես գիտենք, չի պահպանել սկզբնական և երկրորդական տիպի վերջավորությունները, նա ունի միայն մի տիպի վերջավորություն, որը որոշ ժամանակներում համընկնում է հնդեվրոպական երկրորդական վերջավորությունների հետ:

Հայերենի անկատարի եզակի երկրորդ գեմքի -իւ վերջավորությունը նույնպես ունի իր համապատասխանությունները հնդեվրոպական լեզուներում: Այդ վերջավորության մեջ զլխավորը ը հնչյունն է, որը տարբեր իմաստներով և տարբեր ձայնավորների զուգորդությամբ պահպանվել է մի շարք լեզուներում: Սանսկրիտերենում նա հանդես է գալիս իբրև հոգնակի երրորդ գեմքի վերջավորություն, օրինակ՝ *ce-re* «պատկել են, պատկում են», յատկաներենում այն գրվում է այն բայերին, որոնք արդեն ունեն իրենց վերջավորությունները, օրինակ՝ *uehi-tu-r* «գնում է», *uehi-mu-r* «գնում ենք» և այլն: Հայերենում նույնպես -ը, -իւ վերջավորությունը կարող է գրվել բայական այն ձևերի վրա, որոնք արդեն ածանցված են, ինչպես՝ գրե-լ-իր, գրե-լ-ը, գր-եց-եր և այլն:

Հայերենի անկատարի գիմային վերջավորությունների ծագման հարցը վաղուց ի վեր զբաղեցրել է ինչպես հայ, նույնպես և օտար լեզվաբանների: Հայագետներից ոմանք (Ֆ. Բոպպը) կարծել են, թե հայերենի անկատարի վերջավորությունները *es* օժանդակ բայի համապատասխան վերջավորություններն են, որոնք իբրև թե անփոփոխ կցվել են խոնարհվող բայի ներկայի հիմքին: Այդ տեսակետով չեն բացատրված անկատարի վերջավորությունները, որովհետև օժանդակ բայի անկատարի ձևերի մեջ նույնպես առկա են արմատար և բայական վերջավորությունները, ինչպես հայերենի մյուս բայերում: Լեզվաբաններից ոմանք (Ֆ. Մյուլլեր) ենթադրել են, թե անկատարի չ հընչյունը առաջացել է օժանդակ բայի *s-*ից. մի շարք ալլ լեզվաբաններ (Բուդդե, Պետերսեն) ենթադրել են, թե անկատարը կազմվել է օժանդակ բայի անկատարի նմանողությամբ: Մեյլեն կարծում է, որ անկատարի գիմային վերջավորությունները բայեր են և կազմված են գերբայից և էական բայից. առաջին գեմքի ի-ն (էի) էական բայի անցյալն է և ունի իր համապատասխանությունները հնդեվրոպական մյուս լեզուներում. երրորդ գեմքի ը վերջավորությունը նրա կարծիքով նախնական է և կապվում է հնդեվրոպական բայի չեղոք սեռի համապատասխան վերջավորության հետ և ընդհանրապես է, էի, էի, էի ձևերը առաջացել են բերել բայի տիպի նմանողությամբ: Մեյլերի կարծիքը պաշտպանել են մի շարք լեզվաբաններ, թեև այդ տեսակետը նույնպես լեզվական նոր փաստերի կարիք է զգում: Երկրորդ գեմքի ը-ն Մեյլեն կապում է հրամայական եզանակի համապատասխան վերջավորության հետ: Այդ ը-ն, ինչպես նաև անցյալ կատարյալի ու հրամայականի որոշ բայերի եզակի երկրորդ գեմքի ը-ն անկասկած կապված են միմյանց հետ. նրանք բոլորն էլ միևնույն ծագումը ունեն և արտահայտում են երկրորդ գեմքը. թե որից որին է անցել, դժվար է ասել. հավանաբար նա երկրորդ գեմքը ցույց տվող մի ածանց է, որը պահպանվել է հայերենում միայն որոշ ժամանակներում:

Հայերենի անցյալ անկատարի և անցյալ կատարյալի միջև կարելի է նկատել նաև ալլ ընդհանրություններ. անցյալ կատարյալի և անկատարի եզակի առաջին ու երրորդ գեմքերը նույնպես միևնույն վերջավորություններն ունեն, ինչպես գրե-լ-գրեցի, գրե-լ-գրեցաք, գրե-լ-գրեցին և այլն: Այդպիսի

երևույթ, ինչպես նկատել է պրոֆ. Ն. Աճառյանը, հատուկ է նաև հնդեվրոպական այլ լեզուներին:

Անցյալ անկատարի եղակի երրորդ գեմքում հանդես է գալիս նաև իւր վերջավորութիւնը, ինչպես՝ խօսիւր, կոչիւր և այլն: Այդ վերջավորութիւն մասին նույնպես եղել են տարբեր կարծիքներ. Բոպպը կարծում է, որ այն ի կրավորական խոնարհման մի մնացորդ է, Պետերսընը ենթադրում է, թե իւր փոխադարձ դերանունն է, որը կցվել է բայարնին և կազմել նրա երրորդ գեմքը: Մեր կարծիքով այդ մասնիկը (իւր) նույնպես բարդ կազմութիւն ունի. այդ մասնիկի ընդ գեմքի վերջավորութիւնն է, որը հանդես է գալիս բոլոր դեպքերում, ինչ համարաբար կրավորական իմաստ արտահայտող մի ածանց է, ինչպես կարծում է Բոպպը, իսկ Ն. մեր կարծիքով հայերեն յ-ն է, կամ հնդեվրոպական է-ն՝ որ հայերենի հնչյունական օրինաչափութիւններով վերածվել է Ն-ի ձայնավորից հետո փակ վանկում, ինչպես մենք տեսնում ենք նաև զոյական անունների և ենթակայական գերբայի մեջ:

Հայերենի անկատարի հոգնակին նույնպես կազմվում է ընդհանուր, միայն հայերենին հատուկ օրինաչափութիւններով: Ինչպես մյուս ժամանակներում, նույնպես և անցյալ անկատարում հոգնակի առաջին և երկրորդ գեմքերը ունեն ք վերջավորութիւն, իսկ երրորդը՝ ն: Անցյալ անկատարի հոգնակիում չեն պահպանվել գեմքերի համար հատուկ վերջավորութիւններ: Նրանց իմաստը արտահայտում են հոգնակի վերջավորութիւնները իրենց նախորդող և ի ձայնավորի հետ: Նրանք հոգնակիակերտ հին ածանցների երբևիտի տարրերն են, որոնք վերապրուկներն պահպանվել են հայերենի անցյալում, թեև ոչ իրենց սկզբնական ձևով:

Ա Ն Յ Յ Ա Լ Կ Ա Տ Ա Ր Յ Ա Լ

Հայերենի անցյալ կատարյալի հիմքը լինում է արմատական և բաղադրյալ: Արմատական հիմքը համընկնում է բայարմատին, իսկ բաղադրյալ հիմքը ունի ց ածանցը, որի հետևանքով զրարարի քերականները այդ հիմքը կոչում են ցոյական: Հայոց լեզվի անցյալ կատարյալի կազմութիւն մեջ, գեուկս գրաբարում, իշխել է ցոյական հիմք ստեղծելու տենդենցը: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալի հիմքը կազմվում է բայարմատով և եւաց վերջավորութիւնով, որը հնչյունափոխվելով դառնում է եց: Բացառութիւն են կազմում միայն աւել, գիւտել, կարել (կարողանալ), մալքել (կարողանալ), մեղել բայերը, որոնց արմատին ափելանում է աց (ասաց, գիտաց, կարաց, մարթաց, մերկաց): Ե խոնարհման պարզ բայերի մեջ արմատական հիմք ունեն ւծել, բերել, նեղուսել (գամել), հաւնել բայերը, որոնք հետագայում վերածվել են ցոյական հիմքի: Ե խոնարհման -ան ածանց ունեցող բայերը արմատական հիմք են ունեցել, ինչպես՝ բեկանել-բեկ, ելանել-ել, դտանել-դիտ, հարկանել-հար, մտանել-մուտ, սպանանել-սպան, տեսանել-տես, օծանել-օծ և այլն, իսկ բաղադրական կերպածանցներ ունեցողները՝ բաղադրյալ ցոյական հիմք, ինչպես՝ խոցոտել-խոցոտեաց, խածատել-խածատեաց, բեկտել-բեկտեաց, փողոտել-փողոտեաց և այլն: Ան ածանցը անցյալի հիմքում ընկնում է, իսկ բաղադրական ածանցները պահպանվում են: Հայերենի զարգացման տենդենցը եղել է ածանցների պահպանումը անցյալի հիմքում. այդ պատճառով էլ ան ածանց ունեցող բայերի գերակշ-

ողող մեծամասնությունը արդի հայերենում դարձել է ցոյական և պահպանել
անցյալ կառարյալի հիմքում ան ածանցը, թեև երբեմն հնչյունափոխված ձևով:

Ի խոնարհման պարզ բայերի անցյալի հիմքը նույնպես կազմվում է
բայարմատից և եաց (եց) վերջավորությունից՝ ինչպես խորհիմ-խորհեաց,
խօսիմ-խօսեաց, բազմիմ-բազմեաց, հալիմ-հալեաց և այլն: Ի խոնարհման
պարզ բայերից նախիմ բայը ունի արմատական հիմք՝ նիստ: Այդ խոնարհ-
ման ան ածանց ունեցող բայերը նույնպես արմատական հիմք ունեն. ինչ-
պես՝ անկանիմ-անկ, բուսանիմ-բուս, շիջանիմ-շէջ, ուսանիմ-ուս և այլն: Չ և
նչ ածանցներ ունեցող բայերը ունենում են ի թույլ բաղադրիչը, որը միա-
նալով գեմքերի վերջավորությունը՝ դառնում է ն, ինչպես՝ թաքչիմ-թաքեաց,
երկնչիմ-երկի-ալ (երկեաց), մաաչիմ-մատի-ալ (մաաեաց), լարնչիմ-լար-
եալ և այլն:

Ա խոնարհման համարյա բոլոր բայերը անցյալում ունենում են ցոյա-
կան հիմք. ինչպես՝ աղալ-աղաց, անսուլ-անսաց, լուանալ-լուաց, հեռանալ-հե-
ուաց, մերկանալ-մերկաց և այլն:

Ու խոնարհման բայերը, բացի ընկեցուլ, ընքեցուլ, զգեցուլ, լնուլ,
խնուլ, յնուլ բայերից, անցյալում արմատական հիմք ունեն. օրինակ՝ արգե-
լուլ-արգել, թողուլ-թող, կիզուլ-կէզ, լաւելուլ-լաւել և այլն: Այս խոնարհման
ենթարկվող և ածանց ունեցող մի շարք բայեր անցյալի հիմքում ունեն ի
թույլ բաղադրիչը, որը, ինչպես ի խոնարհման չ և նչ ածանցներ ունեցող
բայերի բաղադրիչը, միանալով գեմքի վերջավորությւններին, վերածվում է
ն-ի. ինչպես՝ գարթնուլ-գարթի-ալ (գարթեաց), մածնուլ-մածի-ալ (մածեաց),
շրտնուլ «խրտնել, շիթթել» շրտի-ալ (շրտեաց), պահնուլ «վախենալ, վախից
ու գարմանքից ստոչել» -պալի-ալ (պալեաց) և այլն:

Հայերենի անցյալ կառարյալի ցոյական և արմատական հիմքերը ունեն
գեմքերի միատեսակ վերջավորություններ: Ներգործակերպ խոնարհման բա-
յերը եզակի առաջին գեմքում ունենում են ի, երկրորդում՝ եք, երրորդում՝
գերո (հիմքը), հոգնակիում՝ աք, եք (իք), ին վերջավորություններ, իսկ կրա-
վորակերպ խոնարհման բայերը՝ եզակի առաջին գեմքում՝ ալ, երկրորդում՝
աք, երրորդում՝ աւ, հոգնակիում՝ աք, ալք, ան վերջավորությունները, որոնք
ավելանում են կառարյալի հիմքի վրա, որի հետեանքով շեշտը անցնում է
վերջավորության ձայնավորին և բայը ենթարկվելով հայերենի հնչյունափո-
խական կանոններին՝ -եաց վերջավորությունը վերածում է -եց-ի. եթե բալ-
արմատում կան ալլ հնչյունափոխվող հնչյուններ, նրանք նույնպես ենթարկ-
վում են հնչյունափոխական կանոններին. օրինակ՝ գրեաց-գրեցի-գրեցեր,
գրեաց, գրեցաք, գրեցէք, գրեցին, լուց-լուցի, լուցեր, լուց, լուցաք, լուցէք,
լուցին, գիտ-գտալ, գտար, գտաւ, գտաք, գտան, շէջ-շիջալ, շիջար,
շիջալ, շիջաք, շիջալք, շիջան և այլն:

Անցյալ կառարյալի այդ վերջավորությունները կազմված են երկու
տարրից՝ գեմքի վերջավորություններից, և ձայնավոր հնչյուններից, որոնք
ունեցել են իրենց քերականական խմուտը, որը հետագայում փոխվել կամ
մթաղվել է: Եզակի առաջին գեմքը, ինչպես տեսանք, ունի ի վերջավորու-
թյունը, որի ծագման մասին եղել են բազմազան տեսակետներ: Ազգաբան-
ներից ոմանք ալդ վերջավորությունը անբացատրելի են համարել: Մեկի և
Իրուգմանի ենթադրությամբ կրավորակերպ խոնարհման չ-ն կապ ունի ներ-
գործակերպ խոնարհման ի-ի հետ: Մեր կարծիքով անցյալի առաջին գեմքի

վերջավորությունը ծագումնաբանորեն կապվում է հնգվորոպական բայի չեզոք սեռի եզակի առաջին գեմքի - ai վերջավորության հետ, որը համեմատաբար ափելի լրիվ ձևով պահպանված է հունարենում, ինչպես $\varphi\acute{\epsilon}\rho\omicron\text{-}\mu\text{-}\alpha\iota$ «տարվում եմ, բերվում եմ», հին պուու. asmi «եմ» և այլն: Հնգվորոպական որոշ լեզուներում այդ վերջավորության համապատասխանությունները պահպանվել են, բայց ոչ իբրև չեզոք սեռի բայերի վերջավորություններ. ինչպես՝ սանսկ. *tutud-e* (ai- հնչյունափոխված) «հրեցի», լատ. *tutud-i* «խփեցի» և այլն: Այդ վերջավորությունը պահպանված է նաև մի շարք լեզուների երկրորդական տիպի վերջավորություններ բնդունող բոլորների մեջ՝ ձևով. ինչպես՝ սանսկ. *akr-i* «կատարեցի, արեցի», գոթ. *aoi-i* «ասացի» և այլն: Հայերենը պահպանել է այդ վերջավորությունը ի ձևով՝ ներդրծակերպ բայերի առաջին գեմքում, բայց համարյա անփոփոխ՝ կրավորակերպ խոնարհման բայերի եզակի և հոգնակի բոլոր գեմքերում: Այդ հանգամանքը ցույց է տալիս, որ հայերենի որոշ բայաձևերում պահպանված է a ածանցի չեզոքությունը իմաստը: Իսկապես, ինչպես հին հայերենում, նույնպես և միջին հայերենում և խոնարհման բայերի գերակշռող մեծամասնությունը ներդրծակերպ խոնարհում է ունեցել, և ընդհակառակը, և խոնարհման բայերի մեծ մասը՝ կրավորակերպ խոնարհում: Հայերենի բայերի այդ հատկանիշը, կարծես թե, պահպանված է նաև ժամանակակից հայերենի բայերում, չնայած որ դալի չափով փոփոխվել են հին հայերենի խոնարհման առանձնահատկությունները և առաջացել են գերբայով գիմավոր ժամանակներ, որոնք հատուկ չեն գրաբարին:

Հին հայերենի անցյալ կատարյալի երկրորդ գեմքը ունի յ վերջավորությունը, որը հանդես է գալիս կամ և կամ ա հնչյունների հետ. ինչպես՝ գրեց-ի-ր, գրեց-ա-ր և այլն: Այդ ձայնավոր հնչյուններից ա-ն, ինչպես ասվեց, չեզոքի ցուցանիշն է, որը պահպանվել է նաև չեզոք բայերի եզակի և հոգնակի բոլոր գեմքերում: Ն-ն սկզբնական e ձայնավորն է, որ հայերենում ստացել է քերականական ֆունկցիա, այսինքն՝ կազմում է անցյալ կատարյալի եզակի երկրորդ գեմքը՝ վերջավորության հետ: Այդ վերջավորությունը մի շարք հնգվորոպական լեզուներում պահպանվել է քերականական տարբեր իմաստներով, օրինակ՝ բրետոներենում կան -ir, -ar, -er վերջավորությունները, որոնք գրվելով բայի վրա, փոխում են նրա քերականական իմաստը, բայց ոչ գեմքը, որը որոշվում է համապատասխան գերանուններով: Հին իտալերենում այդ վերջավորությունների համապատասխան ձևերը գրվում են կրավորական բայերի երրորդ գեմքի վրա, ինչպես՝ *beris* «տարվում է, նրան տանում են»: Այդ յ հնչյունը հաճախ կցվել է աֆն բայերին, որոնք արդեն ունեցել են իրենց վերջավորությունները, օրինակ՝ լատ. *uehi-tu-r* «գնում է», *ueh-a-r* «գնում եմ», *uehi-mu-r* «գնանք» և այլն: Թուրքերենում կա այդ վերջավորությունը իբրև բայերին չեզոք կամ կրավորական սեռի իմաստավոր ածանց՝ նույն վերջավորությունը, մեր կարծիքով, պահպանված է նաև հայերենում տարբեր իմաստներով: Նա հանդես է գալիս անցյալ անկատարի երկրորդ և երրորդ, անցյալ կատարյալի երրորդ և հրամայականի որոշ ձևերի եզակիում: Այդ նշանակում է, որ հայերենը պահպանել է այդ վերջավորությունը հին կիրառության մի քանի գեմքեր, բայց ոչ կրավորական ածանցի իմաստը: Հայերենում նա նախ որոշ ձայնավորների հետ որոշում է բայի

¹ Հմմտ. Մ և յ ե, նշվ. աշխ., էջ 248:

գեմքը. օրինակ՝ գրէիք, գրեք և գրեցեք, մի՛ գրեք ձեռքի մեջ, առանց գերանունի, հասկացվում է բայի և՛ գեմքը, և՛ ժամանակը, և՛ իմաստը: Այսպիսով, այդ վերջավորությունը բոլոր դեպքերում ունի իր որոշակի և կայուն իմաստը, որը առաջացել է հայերենի դարգացման օրինաչափություններից:

Հայերենի անցյալ կատարյալի երկրորդ գեմքի վերջավորությունն ծագման մասին նույնպես եղել են բաղմադրան կարծիքներ. Պետերմանը, Բոպպը, Պատկանյանը այդ վերջավորությունը համարում են S-ի ձևափոխություն. Պետերմանը կարծում է, որ այդ վերջավորությունը առաջացել է երկրորդ գեմքի գերանունից: Մեյլեն ենթադրում է, որ այդ վերջավորությունը առաջացել է *ra մասնիկից և այլն:

Հայերենի անցյալ կատարյալի եղակի երրորդ գեմքը ունի զերո կամ չ վերջավորությունը, որը հանդես է գալիս միայն կրավորակերպ խոնարհման բայերի երրորդ գեմքում և հնչյունի հետ. նկատի չենք ունենում եղանիլ բայի անցյալ կատարյալի երրորդ գեմքը՝ եղեւ ձևը, որտեղ չ-ին նախորդում է և ձայնավորը, որը հետագայի ձևափոխություն է. նա սկզբնապես ունեցել է եւա (եղեալ, եղեար, եղեաւ) վերջավորությունը, որը ենթարկվել է հայերենի հնչյունափոխական կանոններին և ավել է եւ:

Անցյալ կատարյալի այդ չ վերջավորությունը նույնպես հնդեվրոպական ծագում ունի: Նա, ինչպես ցույց են տվել մի շարք ուսումնասիրողներ, իր տարրերակները ունի խեթերենում, սանսկրիտերենում, լատիներենում և այլն: Այդ վերջավորությունը տարբեր լեզուներում հանդես է գալիս տարբեր հնչյունների հետ և տարբեր ձևերով, խեթերենում ու-ի ավելացմամբ կաղմում է սահմանական եղանակի անցյալի առաջին գեմքը. ինչպես՝ ses «քնել», sesun «քնեցի, քնել եմ», ափ «պահանջել», uekun «պահանջեցի», լատիներենում i-ի և it-ի ավելացմամբ կաղմում է անցյալի եղակի առաջին և երրորդ գեմքերը, ինչպես՝ noui, nouit «ես (նա) իմացալ (աւ)» է և այլն: Թուսարերենում այդ վերջավորությունը հանդես է գալիս w ձևով a-ի ավելացմամբ, ինչպես prakwa «ես հարցրեցի» և այլն: Հայերենում այդ վերջավորությունը հանդես է գալիս չ ձևով, առանց որեւէ ձայնավոր հնչյունի, բայց հնդեվրոպական մի շարք լեզուներում պահպանված ձևերը ցույց են տալիս, որ հայերենում նույնպես այդ վերջավորությունը հանդես է եկել ձայնավոր հնչյունների հետ: Հին հայերենի այդ չ վերջավորությունը հանդում է հին *u (*w) վերջավորությունը, որը պահպանել է իր հետքերը նաև -ուած ածանցի մեջ, որը գրաբարում գրվելով բաղարմատների վրա, նրանցից կաղմում է գոյականներ կամ ածականներ, օրինակ՝ հարուած, հարցուած, հատուած, անկուած, կաղմուած, պարդուած, սկսուած, քանդուած և այլն:

Մեյլեն այդ վերջավորությունը կապում է հնդեվրոպական կատարյալի երրորդ գեմքի *u (*w) վերջավորության հետ և այն համարում է ամենահին մասնիկներից մեկը: Մեյլեի այդ կարծիքի վրա են հենված մեր ենթադրությունները: Պրոֆ. Գ. Ղափանյանը այդ վերջավորությունը համարում է փոքրաստիական լեզուներից անցած հայերենին և կապում է ուրարտերենի Ե-ի հետ: Լեզվաբաններից ոմանք այդ վերջավորությունը համարել են կովկասյան լեզուներից անցած: Վերջին տեսակետը զուրկ է որեւէ հիմքից:

Հին հայերենի կրավորակերպ խոնարհման նույն չ վերջավորության հետ է կապվում հայերենի կրավորական սեռի բայերի չ ածանցը, որը սկսել

է տարածվել միջին դարերում, ապա անցել է ժամանակակից հայերենին իբրև կրավորական սեռի բալերի տարրերիչ նշան:

Անցյալ կատարյալի հոգնակի համապատասխան գեմքերի վերջավորությունները տարբերվում են մյուս ժամանակներից հոգնակիներին նախորդող ձայնավորներով. առաջին գեմքը, ինչպես կրավորակերպ, նույնպես և ներդրծակերպ խոնարհման համար, ունի ա(p), երկրորդ գեմքը՝ յ(ր) և երրորդը՝ ն(ն), ա(ն) վերջավորությունները, որոնցից յուրաքանչյուրը ունի իր իմաստը. ա-ն անցյալի առաջին գեմքի վերջավորության ձայնավորն է, որը պահպանվել է նաև անկատարում, երկրորդ գեմքի յ-ն, որը ներդրծակերպ խոնարհման բալերի մեջ հանդես է գալիս և լծորդի հետ և տալիս է և, ինչպես տեսանք, կապվում է հնգվորոպական -ե ածանցի հետ. երրորդ գեմքի ն և ա հնչյունները համապատասխան խոնարհման լծորդներն են, որոնք նույնպես և հնգվորոպական անցյալ կատարյալի երրորդ գեմքի բալերի հոգնակի վերջավորությունների համապատասխան ձայնավորների հետ, և արտահայտում են անցյալի իմաստ:

Հայերենի անցյալ կատարյալի ցոյական և արմատական հիմքերը իրենց առաջացման օրինաչափություններով տարբերվում են միմյանցից: Արմատական հիմքերը իրենց կազմությամբ ալելի հին և ն անմիջապես կապվում են հնգվորոպական լեզուների աօրիստի հիմքի հետ. նրանք անցյալ կատարյալի որևէ ցուցանիշ չունեն, ինչպես հնգվորոպական շատ լեզուներ, որոնց աօրիստի հիմքը արմատական է, առանց որևէ ածանցի:

Հայերենի արմատական հիմք ունեցող անցյալ կատարյալը համապատասխանում է հնգվորոպական բալի երկրորդական վերջավորություններ ստացող բալաձևերին: Սակայն իր կազմության եղանակով և արտահայտած իմաստով զգալի չափով տարբերվում է հենց այն ձևերից, որոնց հետ ծագումնաբանորեն կապվում է:

Անցյալ կատարյալի եղակի երրորդ գեմքը, եթե բայը միավանկ է, ստանում է ն (ձայնավորներից առաջ ն) նախահավելվածը (augmentum), որը հայերենում քերականական որևէ իմաստ չունի և հաճախ կարող է նաև հանդես չգալ, ինչպես՝ թողի, թողեր, եթող կամ թող, հեղի, հեղեր, հեղ կամ հեղ, լուցի, լուցեր, ելոյց կամ լոյց, մաի, մաեր, հմուտ կամ մուտ, աուի, աուեր, էառ կամ առ և այլն: Ն նախահավելվածը հնգվորոպական որոշ լեզուներում ալելանում է սահմանական եղանակի բալաձևերի երկրորդական վերջավորությունների ունեցող բալաձևերին, օրինակ՝ սանսկ. a-ricat հունարեն՝ ἐλπίς «նա թողեց»: Այն բալերը, որոնք սկսվել են ձայնավորով, սովորաբար այդ նախահավելվածը ձուլվել է սկզբնական ձայնավորին, օրինակ՝ as արմատից սանսկրիտերենում ստեղծվել է ah «եղավ» անցյալի ձևը: Այդ նախահավելվածը չի կազմել բալի մասը, նա երբեմն չի դրժածվել բալի հետ, բայց այն գեպքերում, երբ գծվար է արտասանվել բառը, կամ արմատը մաշված է եղել, պարտադիր կերպով դրժածվել է այդ մասնիկը: Նույն օրինաչափությունն են հնթարկվել նաև հայերեն դնել և առաջ բալերի անցյալ եղակի բոլոր գեմքերը, որոնք ունեն և նախահավելվածը (եղի, եղեր, եղ, հուտ, հուեր, հա). հունարեն մեշտ ասվել է εἶπε «նա ուներ» և ոչ οἶπε: Հունարենում նախահավելվածը հանդես է գալիս իբրև բալական նախածանց, թեև հնգվորոպական հիմք լեզուն չի ունեցել նախածանցներ: Հայերենում այդ նախածանցիկը պահպանվել է իբրև հայերենի զարգացման հին արտահայտու-

թյուններից մեկի մնացորդը, որն ամբողջապես վերացել է հայերենի հետագա զարգացման ընթացքում: Բայց նախահավելածի զուլթյունը դրաբարում ցույց է տալիս, որ հայերենը իր մի շարք արտահայտություններով առնչվում է հնդեվրոպական լեզուների զարգացման համեմատաբար վաղ շրջանի հետ, քան հնդեվրոպական կենդանի մի շարք այլ լեզուներ:

Սակայն հայերենի համար, զետեւ հին լեզվի շրջանում, ավելի կենսունակ է եղել ցույցական հիմքով անցյալ կատարյալ կազմելու տեղեկներ: Հայերենի անցյալի հիմքը իր ցույցական կազմություններ տարբերվում է հնդեվրոպական լեզուներից: Այդ հիմքը բաղադրվում է. նա կազմվում է բայարմատից և ցածանցից, որը ծագումնաբանորեն թեև կապվում է հնդեվրոպական ske/o ածանցի հետ, բայց իր կազմությամբ և քերականական իմաստով ու ձևավորմամբ հատուկ է միայն հայերենին:

Հնդեվրոպական ske/o ածանցի հետքերը պահպանված են խեթերենում sk, հուեարենում՝ skw, լատիներենում՝ sco, հին գերմաներենում՝ -sku, սանսկրիտերենում՝ ceha ձևերով և այլն: Բայց այդ լեզուներում հիշյալ ածանցը հանդես է գալիս տարբեր իմաստներով: Հայերենում նույն ածանցը, ինչպես տեւանք, պահպանվել է ցածույ, սակայն տարբեր իմաստներով, որոնք հատկապես կարելի է միայն հայերենի զարգացման օրինաչափությունները նկատի ունենալով:

Հայերենի ցույցական հիմք ունեցող բայերը պահպանել են ske/o ածանցի ստոմներից մեկը, բայց այն հայերենում ստացել է նաև ապառնի ժամանակի իմաստ և կազմել է նոր ժամանակներ և պատճառական կերպի բայեր, որոնց մասին արդեն խոսելու ատիթ ենք ունեցել:

Հայերենի անցյալ կատարյալը, թեև մի շարք հատկանիշներով կապվում է հնդեվրոպական լեզուների հետ, բայց իր կոնկրետ դրսևորումներով նրանցից զգալի չափով տարբերվում է և հանդես է գալիս աչնալիսի ձևերով, որոնք չկան հնդեվրոպական ոչ մի լեզվում: Հայերենի զարգացման ավելի ուշ շրջանում ձևավորվելով անցյալի ցույցական հիմքը՝ դարձել է նրա առաջնթացի տեղեկները արտահայտողը և տարածվել ու դուրս է մղել ոչ ցույցական հիմքը, որը հայոց լեզվի զարգացման հնազույն օրինաչափությունների հետ էր առնչված, ինչպես իր արտահայտման ձևով, նույնպես և իմաստային ներկայանում:

ԱՌԱՋԻՆ ԿԱՄ ՍՏՈՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՊԱՌԵՆԻ

Առաջին կամ ստորադասական ապառնին գրաբարում կազմվում է ներկալի հիմքից, սակայն ցածանցով, որի համար էլ մենք այդ ժամանակի կազմության մասին խոսում ենք անցյալ կատարյալի կազմության հարցերը պարզելուց հետո:

Հին հայերենի առաջին ապառնու կազմության, ինչպես նաև նրա վերջավորությունների առաջացման հարցով զբաղվել են շատ լեզվաբաններ: Երանք հատկապես տարբեր տեսակետներ են արտահայտել նրա կազմության մասին, որովհետև այդ ապառնու գիմալին վերջավորությունները նույնանում են ներկալի գիմալին վերջավորությունների հետ և ծագումնաբանորեն նույնն են: Ոմանք կարծել են, որ հայերենի ստորադասական առաջին ապառնին կազմված է գերրալից և էական բալի ստորադասականի համապատասխան ձևերից

(Բոսպ.)։ նրանց կարծիքով լողուցում, գրիցում, աղայցում ձևերի մեջ կա երկու տարբեր թողու-իցեմ, գրե-իցեմ, աղա-իցեմ, որոնց մեջ իցեմ, իցես, իցե վերջավորությունները համեմատում են սանսկրիտերենի էական բայի բղական syam, syas, syat ձևերի հետ։ Հայագետներից Պատկանյանը պաշտպանելով այդ կարծիքը, դանում է, որ բոլոր բայերը ունեցել են միևնույն վերջավորությունները և ուցում ձևը առաջացել է լծորդի ազդեցությամբ, լողուցեմ ձևը դարձել է լողուցում, որովհետև սկզբի ու-ն ազդել է ն-ի վրա և փոխել է ու-ի։ Հյուբշմանը ենթադրում է, թե առաջին ապառնին կազմվել է ներկայի հիմքից, յց ածանցից և ներկայի դիմալին վերջավորություններից։ Հյուբշմանի կարծիքը տրամադրանական է, թեև դրանով այնուամենայնիվ չի պարզվում յց-ի հարցը։ Մեկն ճիշտ կերպով նկատել է, որ առաջին ապառնու վերջավորությունները ունեն բարդ կազմություն և դրանց մեջ հանդես եկած ց-ն կապվում է հնդեվրոպական ske/o ածանցի հետ։ Առաջին ապառնու վերջավորության մեջ հանդես եկած ի-ի մասին անում է Երկու ենթադրություն, նախ՝ կարծում է, որ ի-ն արմատական հնչյուն է, ապա՝ ենթադրում է, որ նա ածանց է և ըղձականի իմաստ է արտահայտել։ Մեկն վերջին կարծիքը ավելի մոտ է ճշմարտությանը, որովհետև հայերենի առաջին ապառնին արտահայտում է նաև ըղձականի իմաստ, որը կարող էր դրսևորվել հատուկ ածանցով։ Վերոհիշյալ բոլոր լեզվաբանները, սակայն, խոսել են հայերենի առաջին ապառնու մասին ընդհանրապես, հաշվի չեն առել հայերենի դարգացման օրինաչափությունները։ Մինչդեռ առաջին ապառնին առաջացել է հայոց լեզվի դարգացման հետագա շրջանում, այն ժամանակ, երբ նա շատ ու շատ հեռացած է եղել հնդեվրոպական հիմք լեզվից և ունեցել է իր դարգացման կայունացած օրինաչափությունները։

Առաջին ապառնու -իցեմ, -իցես, -իցե, -ալցեմ, -ալցես, -ալցէ, -իցիմ, -իցիս, -իցի, -ուցում, -ուցես, -ուցու վերջավորությունները կազմված են չորս տարրերից. յ մասնիկից, որը ծագում է հնդեվրոպական չ ածանցից, որին անդրադարձել ենք անցյալ անկատարի վերջավորությունների մասին խոսելիս, ց ածանցից, որը, ինչպես վերևում նշեցինք, ծագել է հնդեվրոպական ske/o ածանցից. խոնարհիչներից (ն, ա, ի, ու) և դեմքի վերջավորություններից (մ, ս, յ)։ Այդ մասնիկներից յուրաքանչյուրը իր քերականական ֆունկցիան ունի հայերենում և այդ պատճառով էլ պահպանվում է բոլոր խոնարհումներում, թեև հնչյունափոխության ենթարկված ձևով։ Յ և ց ածանցները բոլոր գեղերում հանդես են գալիս ձուլված վիճակով, սակայն միանալով բայահիմքի ձայնավորներին՝ յ-ն հնչյունափոխվում է և վերածվում է կամ ի-ի (ն և ի խոնարհման բայերում), կամ նույնությամբ պահպանվում է (ա խոնարհման բայերում), կամ դառնում է լ (ու և ո խոնարհման բայերում)։ Դեմքերի վերջավորություններին նախորդող ձայնավորները նույնպես խոնարհիչներ են, որոնք այդ կապակցությունների մեջ ունեն նաև քերականական իմաստ, որովհետև յց-ից առաջ եկած խոնարհիչները ձուլվելով յ-ին հիմնավորապես ձևափոխվել են և կորցրել իրենց սկզբնական իմաստը։ Սակայն դեմքի վերջավորություններին նախորդող խոնարհիչները երեքն են՝ ն, ի, ու, որոնք ցույց են տալիս, որ հենց դրաբարում տեղի էր ունենում խոնարհիչների կրճատման պրոցեսը, որը իշխող է դառնում հայերենի դարգացման ուշ շրջանում։

Առաջին ապառնու հոգնակին, ինչպես հայերենի մնացած ժամանակներինը, կազմվում է ք և ն հոգնակի վերջավորություններով, որոնցից ք-ն բնականում են առաջին և երկրորդ գեմքերը, իսկ ն-ն՝ միայն երրորդ գեմքը։ Այդ հոգնակի վերջավորություններից առաջ միշտ չէ, որ պահպանվում են գեմքերի վերջավորությունները։ այդ գեմքերում հոգնակի վերջավորությունը արտահայտում է նաև գեմքի իմաստ։ Այսպես օրինակ՝ գրիցեմք, գրիցէք, գրիցեն, խօսիցիմք, խօսիցիք, խօսիցին, աղալցեմք, աղալցէք, աղալցեն, թողուցումք, թողուցուն հոգնակի ձևերի մեջ գեմքերի վերջավորությունները լրիվ չափով պահպանվել են առաջին գեմքում և հնչյունափոխված ձևով՝ երկրորդ գեմքում, իսկ երրորդ գեմքում հոգնակի մասնիկից առաջ հանդես է գալիս միայն խոնարհիչը։ Երրորդ գեմքի վերջավորության հետքերը կարելի է գիտել միայն ի և ու խոնարհման մեջ։

Այդ ժամանակի ըղձական, պայմանական և հարկադրական ապառնիների իմաստը արտահայտվում է յ և ջ (յց, ից) ածանցներով և նրանցից մեկնում է մեկի բացակայությունը բավական է, որ բալը գրկվի իր ալը իմաստից։

Հայերենը իր զարգացման ընթացքում մոռացել է այդ ժամանակը և դրա արտահայտած իմաստների համար ստեղծել է տարբեր կազմություն ունեցող ժամանակներ։

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Ս Պ Ա Ռ Ն Ի

Հին հայերենի երկրորդ ապառնին իր կազմության եղանակով զգալիորեն տարբերվում է առաջին ապառնուց, բայց արտահայտած իմաստներով նույնանում է նրա հետ, միայն այն տարբերությունով, որ ունի նաև սահմանական ապառնու իմաստը և արտահայտում է ավարտուն գործողություն։ Առաջին ապառնին ավելի շատ տեական ապառնու իմաստ ունի, այսինքն՝ պահպանել է ներկայի հիմքից՝ կազմված ժամանակների տեղություն, պրոցեսի մեջ լինելու նշանակությունը։ Առաջին ապառնին կազմվելով ներկայի հիմքից, տարբերում է բոլոր խոնարհումները իրենց լծորդներով, իսկ երկրորդ ապառնին կազմվելով անցյալի հիմքից՝ դանազանում է միայն ներգործակերպ և կրավորակերպ խոնարհումներ, որոնց համար ունի գեմքերի հատուկ ածանցներ, որոնք կազմվում են ներգործակերպ խոնարհումների համար ունեն -ից, -ցես, -ցե, կրավորականի համար -այց, -ցիս, -գի, հոգնակիում՝ -ցուք, -ջիք, -ցնև և -ցուք, -ջիք, -ցին արտահայտությունները։ Բաղադրյալ ցոյական հիմք ունեցող բայերից աֆրիկատը կզակի երրորդ ու երկրորդ և հոգնակի բոլոր գեմքերում հանդիպելով ց և ջ աֆրիկատներին տալիս մասնավոր և վերածվում է ւ-ի։ Բացառություն են կազմում արմատական ց ունեցող և միավանկ բայերը։

Երկրորդ ապառնիում ցոյական հիմք ունեցող ներգործակերպ բայերը խոնարհվում են հետևյալ կերպ՝ գրեցից, գրեսցես, գրեսցես, գրեսցուք, գրեսցիք, գրեսցեն, կրավորակերպ խոնարհման բայերը՝ խօսեցայց, խօսեցիս, խօսեսցի, խօսեսցուք, խօսեսցիք, խօսեսցին, ոչ ցոյական հիմք ունեցող ներգործակերպ խոնարհման բայերը՝ հատից, հատես, հատցե, հատցուք, հատցիք, հատցեն, կրավորակերպ՝ բայերը հատայց, հատիս, հատցի, հատցուք, հատցիք, հատցին։ Փրաբարի բոլոր բայերը ապառնիում ունենում են միանման ձևեր, և թե անցյալի հիմքում թույլ ի բաղադրիչը չունենա։ Այդ բաղադրիչը ունեցող բայերը ընդունում են գեմքերի ներգործակերպ վերջավորություններ։

բայց դրանցից առաջ հանդես եկող -եայ-ն հնչյունափոխվում է և վերածվում է -ի-ի. ինչպես՝ թաքեայց (թաք-ի-այ-ց), թաքիցես, թաքիցէ, թաքիցուք, թաքիցիք, թաքիցեն։

Հայերենի երկրորդ ապառնու կազմաթյան հարցը քննելիս՝ լեզվաբանները ընդունել են առաջին և երկրորդ ապառնու կապը, սակայն աարբեր կարծիքներ են արտահայտել երկրորդ ապառնու վերջավորությունների առաջացման մասին. այսպես, օրինակ՝ Պատկանյանը կարծել է, թե երկրորդ ապառնին սկզբնական շրջանում ունեցել է գեմ, ցես, ցե, գեմք, ցեք, ցեմ վերջավորությունները և որ իրեն թե եզակի առաջին գեմքի ից, հոգնակի սասաջին գեմքի ցաւք և երկրորդ գեմքի ջիք վերջավորությունները ավելի ուշ շրջանի երևույթ են և առաջացել են ցեմ, գեմք, գեք վերջավորություններից, իսկ գեմքերի հիշյալ վերջավորությունները, նրա կարծիքով, առնչակցվել են սանսկրիտերենի և հունարենի ըզձական ժամանակների վերջավորությունների հետ և այլն։ Հյուբշմանը հայերենի երկրորդ ապառնու վերջավորությունները կապել է առաջին ապառնու վերջավորությունների հետ։ Ա. Մելեն ընդունելով առաջին և երկրորդ ապառնիների կապը՝ կարծել է, որ երկրորդ ապառնին ավելի արխայիկ է և կապվում է անցյալ կատարյալի հետ ու նրա վերջավորությունների մեջ նույնպես առկա է անցյալ կատարյալի skejō ածանցի հայերեն ց տարբերակը։

Հին հայերենի երկրորդ և առաջին ապառնիների և սահմանական եղանակի ներկայի գեմքերի վերջավորությունները, առաջին գեմքերից բացի, հիմնականում նույնն են, օրինակ՝ գրեմ-գրիցեմ-գրեցից, գրես-գրիցես-գրեսցես, գրէ-գրիցէ-գրեսցէ, գրեն-գրիցեն-գրեսցեն։ Երկրորդ և առաջին ապառնու միջև նկատվող ընդհանրությունները ավելի են ընդգծվում, եթե հաշվի առնենք ց ածանցը, որ հանդես է գալիս այդ երկու ժամանակներում և հիմնականում դրանով նրանց տարբերում է ներկա ժամանակից։ Բայց առաջին և երկրորդ ապառնի ժամանակների առանձնահատկությունները երևում են նաև ց ածանցին նախորդող ձայնավորների մեջ. ինչպես արդեն ասել ենք, առաջին ապառնին կազմվում է ապառնի վերջավորության և նրանից առաջ գտնվող ի (յ) հնչյունի, լծորդների ու գեմքերի վերջավորությունների զուգորդությամբ, որոնց մեջ յ-ն և ց-ն միասնաբար արտահայտում են այն իմաստները, որը ունի այդ ժամանակը։ Երկրորդ ապառնի ժամանակում այդ յ հնչյունը չկա և միայն դրանով նա տարբերվում է առաջին ապառնուց, եթե նկատի չունենանք նրա եզակի ու հոգնակի առաջին գեմքերի վերջավորությունները։ Մեր ասածներից պարզվում է նաև իմաստային այն միասնությունը, որ ունեն այդ ժամանակները. նրանք հիմնականում արտահայտում են ապառնու իմաստ և առանձնանում են միայն մանրամասներով։ Ապառնու իմաստը արտահայտում է այդ ժամանակներում ց ածանցը, որը ինչպես արդեն նշված է, հնդեվրոպական մի շարք լեզուներում հանդես է գալիս քերականական զանազան իմաստներով։ Հետաքրքիրն է միևնույն ածանցի տարբեր իմաստների դրսևորման եղանակը. հայերենը այդ բնագավառում նույնպես շիման շատ կետեր ունի հնդեվրոպական լեզուների հետ, թեև ունի նաև զգալի տարբերություններ։ Հնդեվրոպական մի շարք լեզուներում ապառնին կազմվում է միևնույն ածանցի կրկնությամբ. այսպես օրինակ՝ իուլանդերենում -*se- հիմք ունեցող

բայերի ապառնին կազմվում է ~*se-ի կրկնությունը, լատիններենում այդ *se/o ածանցը կազմում է ստորադասական եղանակը և այլն:

Հին հայերենի երկրորդ ապառնին կազմվում է գ ածանցի միջոցով, որը ցույցական հիմք առնցող բայերում ց-ի կրկնությունն է: Ցույցական հիմք չունեցող բայերում այդ ածանցը համեմատաբար ավելի հին շրջանի իմաստներով է հանդես գալիս, այսինքն՝ պահպանել է ածանցի ապառնու հին իմաստը, ինչպես հնդեվրոպական մի շարք այլ լեզուներում: Այդ ածանցը ավելանում է անցյալ կատարյալի եզակի առաջին դեմքի ձևերի վրա, իսկ մյուս դեմքերում ընդունում է նաև դեմքերի վերջավորություններ, որոնք, ինչպես նշեցինք, իրենց կրավորակերպ և ներգործակերպ ձևերում հիմնականում նույնանում են և ներկալի դեմքերի վերջավորությունների հետ:

Հետաքրքիրական է առաջին ապառնու հոգնակի երկրորդ դեմքի կազմությունը, որը գուդադիպում է նաև հորդորական կամ ապառնի հրամայականի կազմության հետ: Երկրորդ ապառնու և հորդորական հրամայականի այդ ձևվերում հանդես է գալիս ջ հնչյունը, որը ծագմամբ կապվում է հնդեվրոպական *dhe/o ածանցի հետ: Այդ ածանցը հայերենում ավել է ջ տարբերակը, հունարենում՝ τ , սլավոնական լեզուներում՝ d և այլն: Հայերենում *dhe/o փոխանցվել է ջ-ի ըստ երևույթին, նրա դարգացման ալն շրջանում, երբ հիմնականում կայունացած չէին գրարարի հնչյունական օրինաչափությունները: Համեմատյան դեպս գրարարի համար d -ի -ջ-ի փոխանցումը օրինաչափ չէր: Մեր ասածներից բխում է, որ ճիշտ չեն ալն լեզվաբանները, որոնք կարծել են, թե հայերենի երկրորդ ապառնու ջ ածանցը առաջացել է ավելի ուշ շրջանում և համապատասխանում է գ ածանցին:

Երկրորդ ապառնու եզակի առաջին դեմքից բացի բոլոր դեմքերը ունեն իրենց վերջավորությունները՝ , ես, ն, ուր, իք, եմ, կամ—, իս ի, ուք, իք, ին, որոնցից ուշագրավ է հոգնակի առաջին դեմքի ու հնչյունը: Այդ դեմքի վերջավորությունները կազմված են երկու տարրերից՝ լծորդից կամ հիմքի ձայնավորից և դեմքը ցույց տվող վերջավորություններից, որոնց ծագման մասին արդեն խոսել ենք: Դեմքի վերջավորություններին նախորդող ձայնավորներից մինչև ավամ մեկ չի հանդիպել միայն հոգնակի առաջին դեմքի ու ձայնավորը, որի գուդադիպումը միայն ջ հոգնակի վերջավորությունը կարող է ցույց տալ ապառնու հոգնակի առաջին դեմքը: Այդ նշանակում է, որ ու ձայնավորը եղել է եզակի առաջին դեմքի վերջավորություն և հայերենի օրինաչափություններին համաձայն պահպանվել է նաև հոգնակիում, ինչպես մի շարք ժամանակներում (գրեմ, գրեմք, գրիցեմ-գրիցեմք), բայց հետագայում ընկել է, որովհետև երկրորդ ապառնու առաջին դեմքը առնցել է իր ավելի գործուն, տարածված և հասկանալի վերջավորությունը (ի կամ յ), որը պահպանվել է բոլոր խոնարհման բայերի եզակի առաջին դեմքում. այսպես՝ այդ ժամանակի լրիվ պատկերը պետք է լիներ գրեգիցու, գրեցալցու. ու դեմքի վերջավորությունը կապվում է հնդեվրոպական o վերջավորության հետ, որը պահպանվել է մի շարք լեզուներում, ինչպես՝ հուն. $\varphi\acute{\epsilon}\rho\omega$ «բերում եմ», լատ. $ueho$ «տանում եմ», $pasco$ «պահանջում եմ» և այլն: Ռուսներենում ալն դարձել է ու. ինչպես՝ $несу$ «կրում եմ, տանում եմ, բերում եմ» և այլն: Ու վերջավորությունը գործուն չի եղել նաև հիշյալ լեզուներում, այդ պատճառով էլ հաճախ ձուլվել է բային և կապվել այլ ժամանակների՝ ընդունելով դեմքերի նոր վերջավորություններ. օրինակ՝ հունարենում պահպանվել է

ստորագասականի $\varphi\acute{\epsilon}o\omega\mu\acute{\epsilon}v$ ձևը, որը կազմված է գեմքերի երկու վերջավորութ-
 թյուններից՝ ω և $\mu\acute{\epsilon}v$: Հայերենում այդ ω վերջավորությունը դարձել է ու և
 եզակիում գտնվելով բառավերջի g -ից հետո՝ ընկել է, որովհետև իր քերա-
 կանական ֆունկցիան անցել է g -ին նախորդող ձայնավորին կամ ձայնորդին,
 իսկ հոգնակիում պահպանվել է նախ՝ այն պատճառով, որ եզակի գեմքի վեր-
 ջավորությունները չեն պահպանվել, ապա՝ նրա համար, որ նա գտնվել է
 բաղաձայնների մեջ և ուժեղ շեշտի տակ:

Հայերենի երկրորդ, ինչպես նաև առաջին, ապառնին իրենց կազմության
 եղանակով և արտահայտած իմաստներով հայոց լեզվի ավելի վաղ շրջանի
 օրինաչափությունների հետ էին կապված և այդ պատճառով էլ հայոց լեզվի
 դարգացման հետագա շրջանում վերանում են, իրենց անդր զիջելով նոր
 կազմավորված և ավելի գործուն ձևերին:

Հ Ր Ա Մ Ա Յ Ա Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

Հին հայերենի հրամայականը ունի երեք ձև՝ արգելական, հորդորական
 և բուն հրամայական: Արգելական հրամայականը կազմվում է ներկայի հիմ-
 քից, իսկ բուն և հորդորական հրամայականը՝ անցյալի հիմքից:

Արգելական հրամայականը ունի տարբեր արտահայտություններ տար-
 բեր խոնարհման ենթարկվող բայերի համար: Ա խոնարհման բայերը արգե-
 լական հրամայականում ոտանում են և՛ ներգործակերպ, և՛ կրավորակերպ
 վերջավորություններ. ի խոնարհման բայերը միայն կրավորակերպ վերջավո-
 րություններ. ա և ու խոնարհման բայերը՝ ընդհանուր վերջավորություններ,
 այսինքն՝ չափաքանչյուր խոնարհման համապատասխան լծորդները պահպան-
 վում են գեմքի վերջավորություններից առաջ, արտահայտելով այն իմաստը,
 որ ունեն նրանք ներկայի հիմքում: Արգելական հրամայականը եզակի թվում
 բոլոր խոնարհման բայերի համար ունենում է ի վերջավորությունը, իսկ
 հոգնակի թվում՝ յք վերջավորությունը, որը կազմված է երկու տարբից՝
 գեմքի վերջավորությունից՝ y -ից և հոգնակի y վերջավորությունից: Դեմքի
 y վերջավորությունը զուգորդվելով տարբեր լծորդների հետ՝ ենթարկվում է
 հնչյունափոխության, այդ պատճառով էլ հանդես է գալիս ի և ու խոնարհ-
 ման բայերում: Արգելական հրամայականը սկզբից ընդունում է մի արգելա-
 կանը: Արգելական հրամայականը ունի -եյ, -եյք, -իյ, -իք, -ար, -արք, -ույ,
 -ուք վերջավորությունները, որոնցից -եյ, -եք-ը ընդունում են և խոնարհման
 ներգործակերպ բայերը, -իյ, -իք-ը՝ և և ի խոնարհման կրավորակերպ բայե-
 րը, -ար, -արք և -ույ, -ուք-ը ա և ու խոնարհման ներգործակերպ և կրավո-
 րակերպ բայերը:

Անցյալ կատարյալի հիմքից կազմվում է բուն հրամայականը: Նա ներ-
 գործակերպ և կրավորակերպ խոնարհման համար ունի հատուկ արտահայտու-
 թյուններ: Ներգործակերպ խոնարհման եզակի երկրորդ գեմքի համար հատուկ
 վերջավորություններ չկան. անցյալ կատարյալի հիմքը, եթե ցույցական է,
 առանց g -ի, շեշտի տակ գտնում է բուն հրամայականի եզակին. օրինակ՝
 գրել բայի անցյալի հիմքը կլինի գրեաց, իսկ հրամայականը՝ գրեա՛, անցա-
 նել-անց, հրամայականը՝ ա՛նց, թողուլ-բող, հրամա՛. բո՛ղ, աղալ-աղաց, հրամա՛.
 աղա՛ և այլն: Հոգնակին ունենում է -եք վերջավորությունը, որը ավելանում
 է անցյալի հիմքին: Օրինակ՝ գրել բայի գրեաց հիմքին ավելանալով -եք

վերջավորութունը կազմում է հրամայականի հոգնակին՝ դրեցէք, թողուլ-թող-թողէք, աղալ-աղաց-աղացէք, հասանել-հաս-հասէք, մտանել-մտտ-մտէք, անցանել-անց-անցէք և այլն:

Կրավորակերպ խոնարհման բայերը ունենում են տարբեր դրսևորումներ, որոնք կամ արտահայտվում են առանձին մասնիկներով կամ զերո վերջավորութամբ. անցյալի հիմքը անփոփոխ, ալսինքն՝ առանց գ-ի տեղման, չեղավելով՝ դառնում է կրավորակերպ ձևեր ունեցող ի խոնարհման և ե խոնարհման կրավորական իմաստ ստացող ներդրծական սևռի ցոյական պարզ բայերի եզակի հրամայականը. օրինակ՝ խօսիմ-խօսեաց, խորհիմ-խորհեաց, գրիմ-գրեաց և այլն: Մնացած բայերը ստանում են -իլ վերջավորութունը, որը դրվում է անցյալ կատարյալի հիմքի վրա. օրինակ՝ հատանել-հատիր, տեսանել-տեսիր, թողուլ-թողիր, աղալ-աղացիր և այլն: Կրավորակերպ խոնարհման հոգնակին կազմվում է -այլք և -արուք վերջավորութուններով, որոնք նույնպես դրվում են անցյալի հիմքին, որը, եթե հնչյունափոխվող ձայնավորներ ունի, ենթարկվում է հայերենի հնչյունական օրինաչափություններին, օրինակ՝ դրել-գրեաց-գրեցալք-գրեցարուք, տեսանել-տես-տեսալք-տեսարուք, նստել-նիստ-նստալք-նստարուք, թողուլ-թող-թողալք-թողարուք և այլն: Անցյալի հիմքում ի թույլ բաղադրիչ ունեցող բայերի հոգնակի -այլք և -արուք վերջավորութունները միանալով ա-ին կամ տալիս են ե, կամ եա, օրինակ՝ թաքչիլ-թաքիլ-թաքեալք-թաքերուք, փախչիլ-փախիլ-փախեալք-փախերուք և այլն:

Վերևում նշված ընդհանուր օրինաչափություններից կան նաև չեղվող գեպքեր, օրինակ՝ զթալ, փութալ, հուսալ պարզ բայերը, որոնք ունեն կրավորակերպ խոնարհում, հրամայականում ստանում են ներդրծակերպ ձևեր՝ զթա, փութա, հուսա, ի խոնարհման որոշ ցոյական բայերի գ հնչյունը հրամայականում ընկնում է, ինչպես՝ համարիմ-համարեաց-համարեա, ողորմիմ-ողորմեաց-ողորմեա, խօսիմ-խօսեաց-խօսեա և այլն: Այդ չեղումները, սակայն, ընդհանուր օրինաչափության մասնակի արտահայտություններ են և բացատրվում են այդ բայերի մեջ կատարված իմաստային փոփոխություններով:

Հորդորական հրամայականը, որ կոչվում է նաև հրամայական եղանակի ապառնի, հիմնականում կազմվում է անցյալի հիմքից ջ ածանցով և եզակիում -իլ, իսկ հոգնակիում -իք վերջավորութուններով: Յոյական հիմք ունեցող բայերի ց-ն հանդիպելով ջ-ին, վերածվում է ա-ի, ինչպես երկրորդ ապառնիում. օրինակ՝ սիրեսչիր-սիրեսչիք, աղասչիր-աղասչիք, հատչիր-հատչիք, գաչիր-գաչիք, խօսեսչիր-խօսեսչիք, թոխչիր-թոխչիք, ստասչիր-ստասչիք, արգելչիր-արգելչիք, լուսսչիր-լուսսչիք, եղիչիր-եղիչիք, լիչիր-լինիչիր-լիչիք-լինիչիք և այլն: Այդ ապառնին, ինչպես իր կազմով թյամբ, նույնպես և արտահայտած իմաստով կապվում է երկրորդ ապառնու հետ. նա ունի ըղծական, պայմանական և հարկադրական ապառնու իմաստը, որովհետև ունի ջ ածանցը, որը, ինչպես արդեն նշել ենք, այդպիսի իմաստային տարբերակումներ է տալիս նաև երկրորդ ապառնի ժամանակում:

Հայերենի հրամայականը, ինչպես մյուս ժամանակները, իր շատ արտահայտություններով կապվում է հնդեվրոպական լեզուների հետ, բայց ունի նաև իր առանձնահատկությունները: Նա արգելական հրամայականի մի ժըրտականով և հաստատական հրամայականի եզակիի զերո հիմքերի վերջավոր-

բությամբ հիշեցնում է հունարենը, սանսկրիտերենը և այլն: Հունարենում պահպանված է մի ժխտականի քա, սանսկրիտերենում՝ mā համապատասխանությամբ: Հորդորական հրամայականի ջ մասնիկով նույնպես հայերենի հրամայականը կապվում է հնդեվրոպական բայի ակնարկի ձևերի հետ, որոնք ստանում են *dhi ածանցը, ինչպես՝ սանսկ. t-hi (i-dhi-ից) «գնա», vid-dhi «իմացիր», հուն. ἴδ-μι «եղիր», ավ. z-di «եղիր», լատ. es-to «թող լինի» և այլն:

Հայերենի հրամայականը իր հետագա զարգացման ընթացքում ձևեր է բերել նոր հատկանիշներ, որոնք նրան զգալի չափով հեռացրել են հնդեվրոպական լեզուների հրամայականից: Եւ կղակի երկրորդ ձևի համար ստեղծել է ը վերջավորությունը, որը նույն ձևով չի հանդիպում հնդեվրոպական ոչ մի լեզվում: Հնդեվրոպական լեզուներում սովորական է եղել գերո վերջավորությամբ հրամայական կազմելու եղանակը: Երանից բացի, մի շարք լեզուներում եղել են նաև հրամայականի tai, tod, to, ինչպես նաև dhi մասնիկները:

Հայերենի հրամայականի ը մասնիկը չի կապվում հիշյալ և ոչ մի մասնիկի հետ, թեև նա նույնպես իր ծագմամբ անկասկած հնդեվրոպական է: Այդ ը գիմալին վերջավորությունը, ինչպես արդեն ասել ենք, հանդես է գալիս հայերենի մի շարք ժամանակներում, գլխավորապես իրեն երկրորդ և, բացառիկ դեպքերում նաև, երրորդ ձևի ցուցիչ. այսպես՝ գրեիր, գրեցիր, մի գրիր և այլն, այդ բոլոր ձևերում էլ ը երկրորդ ձևի գիմալին վերջավորություն է, թեև հանդես է գալիս տարբեր ժամանակներում: Հայերենի այդ *ը-ն*, մեր կարծիքով պահպանվում է նաև կրավորակերպ բայերի հրամայականի հոգնակի -արուք, -երուք մասնիկների մեջ, իրեն գիմալին վերջավորություն:

Հայերենի հրամայականը ունի, սակայն, եր (գրեցէք) և -այք (գտայք) վերջավորությունները, որոնք կազմված են ե և ա ձայնավորներից, յ հնչյունից և ու հոգնակի վերջավորությունից: Այդ մասնիկների ե և ա ձայնավորները, ինչպես նախորդ -արուք և -երուք մասնիկների մեջ, քերականական որևէ իմաստ չեն արտահայտում: Այդ տարրերից յ-ն երկրորդ ձևի վերջավորությունն է, որ այս իմաստով հանդես է գալիս նաև հայերենի մի շարք այլ ժամանակներում և, ինչպես արդեն նշել ենք, կապվում է հնդեվրոպական բայերի երկրորդ ձևի *ti վերջավորության հետ:

Հրամայականի ջիր, ջիք վերջավորությունների ջ ածանցի ծագման հարցը տարբեր կարծիքների տեղիք է տվել: Լեզվաբաններից ոմանք (Բոպպը, Պետերմանը) կարծել են, որ այդ մասնիկը առաջացել է երկրորդ ապառնուցից՝ գլխավորապես հաջորդ ի-ի ազդեցությամբ: Այդ մասնիկի առաջացման մասին Մեյլեն երկու ենթադրություն է անում, նախ այդ կապվում է սանսկրիտերեն ha, լիա. gi, հուն. εἰ մասնիկների հետ, ապա՝ սանսկ. հրամայականի կղակի երկրորդ ձևի dhi (hi), հուն. οἱ վերջավորությունների հետ: Մեր աշխատության մեջ մենք պաշտպանել ենք Մեյլենի երկրորդ կարծիքը՝ դրա ճշտությունը ավելի հավանական համարելով:

Հին հայերենի բայի պարզ ժամանակների կազմության այս համառոտ շարադրանքից երևաց, որ հայոց լեզուն իր բնույթով հնդեվրոպական լեզու լինելով հանդերձ՝ ունեցել է իր զարգացման արույն ընթացքը, որի տեղեկանքները հասկանալու համար անհրաժեշտ է ամենից առաջ նկատի ունենալ նրա օրինաչափությունները:

ОСНОВНЫЕ ЧЕРТЫ ПРОСТЫХ ВРЕМЕН ГЛАГОЛА
ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА

С. К. КАЗАРЯН

(Р е з ю м е)

Изучению армянского языка посвящены многие труды, среди которых особенно ценны исследования Г. Гюбшмана, А. Мейе, Г. Петерсена, Р. Ачаряна, А. Ташяна и других, опубликованием которых не только точно определяется место армянского языка в семье индоевропейских языков, но и разрешаются многие вопросы теории и истории армянского языка.

Автор статьи, подытоживая результаты исследований, посвященных изучению системы спряжения армянского языка, выдвигает новые вопросы, пытается новыми фактами обосновывать те или иные положения, отвергать неправильные, по его мнению, толкования, вносить коррективы в объяснение образования времен глаголов древнеармянского языка и т. д.

В статье поддерживается точка зрения, согласно которой древнеармянский язык считается звеном в развитии армянского языка к новоармянскому.

Подчеркивая индоевропейский характер армянского языка, автор статьи считает, что армянский язык образовался в тесной связи как с индоевропейскими, так и с неиндоевропейскими языками и, подвергаясь разным влияниям, приобрел новые закономерности, определяющие также тип спряжения в данный период его развития.

Закономерности развития системы спряжения в древнеармянском языке обнаруживаются в тенденциях сокращения многозначительности глагольных окончаний, в создании новых форм, выражающих новые значения, в дифференциации значения некоторых глагольных форм и т. д. Все эти вопросы автор статьи истолковывает, имея в виду субстратное отложение, роль которого нельзя отрицать, когда язык подвергается историческому изучению.